

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԳՈՎԱԶԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի 26-րդ հոդվածի.

1. 1.1-ին մասում «Երևանի քաղաքապետն» բառերը փոխարինել «Համայնքի ղեկավարն», «Երևանում համաքաղաքային» բառերը՝ «համայնքային», «Երևան քաղաքում» բառերը՝ «համայնքում» բառերով.

2. 2.1-ին մասում «Երևանի քաղաքապետն» բառերը փոխարինել «համայնքի ղեկավարն» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման

1.	Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը
	2012 թվականի մարտի 21-ի «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» №ՀՕ-99-Ն օրենքով ցուցաբերվել է տարբերակված մոտեցում. բացառապես Երևանի քաղաքապետին է վերապահվել Երևանում համաքաղաքային կանոններին համապատասխան՝ համայնքի տարածքում

	<p>արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության պայմանների խախտման մասին իր ծանուցագրերի պահանջների կատարումից խուսափելու կամ ժամանակին չկատարելու համար, ինչպես նաև Երևան քաղաքում առանց արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության՝ արտաքին գովազդ տեղադրելու համար կիրառելու տուգանք: Խնդիրն ունի օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն:</p>
2.	<p>Առաջարկվող կարգավորման բնույթը</p>
	<p>Սույն տեղեկանքի 1-ին կետում նշված խնդիրները կարգավորելու նպատակով մշակվել է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:</p>
3.	<p>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը</p>
	<p>ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն</p>
4.	<p>Ակնկալվող արդյունքը</p>
	<p>Օրենքի ընդունմամբ կհստակեցվի արտաքին գովազդը կանոնակարգող օրենսդրության նկատմամբ համայնքի ղեկավարի վերահսկողության մեխանիզմը, ինչպես նաև հնարավոր կլինի անձանց պատասխանատվության ենթարկել՝ գովազդի մասին օրենսդրության խախտման պարագայում:</p>